

սիրոյ, անյատակ վշտի հետ մէկտեղ: Արագն անդամ չի կարող թեթեւացնել այդ վիշտը.

Արագն եկաւ լափին տալով,
ժէռ քարերին, ափին տալով.
Ո՞րտեղ քաղեմ ես իմ դարդը,
Զոր գլուխս տափին տալով:

Նոյնչափ զեղեցիկ է Յովհաննիսեանի «Ալազեազ բարձր սարին» ոտանաւորը, որ հայ ժողովրդական քնարերգութեան մէջ ծանօթ եւ ա՛յնչափ տարածուած «պանդուխտի երգերի» համն ու հոտը ունի, գրուած է նրանց ողով, միեւնոյն հիմնական մտտիւով: Դժուար թէ որեւէ ուրիշ ժողովուրդի ստեղծագործութիւն — բանաւոր թէ գրաւոր — այնչափ հարուստ լինի պանդուխտի երգերով, որչափ հայկականնը, որովհետեւ դժուար էլ է գտնել մի ուրիշ ժողովուրդ, որ ա՛յնչափ զաւակներ ունենայ պանդխտութեան մէջ, որչափ՝ մեր ժողովուրդը: Եւ այդպէս է՝ հին-հին դարերից սկսած: Պատահականութիւն չէ, որ «Կոունկը» այսչափ դարեր մնում է կենդանի, սիրուած ու տարածուած:

Պանդխտութեան մէջ՝ պատանի բանաստեղծը տառապում է իր բարի սիրուց, որ մընացել է հայրենի տանը: Նա մտքով ու սրտով իր հայեացքն ուղղում է դէպի հայրենի Արագածը, ժողովուրդի Ալազեազը, որի կատարը արդէն ձիւն է եկել պատել: Բայց եւ այնպէս, բոցավառ սիրտը չուզում է, որ սարի ճամբէքը բաց լինին, որ բանաստեղծը երթայ եւ իր ետին հասնէ: Սա՛ եւս դարդոտ է, սա՛ եւս գըլխին է վա՛յ տալիս ու լալիս՝ հեռաւոր սիրականին տեսութեանը կարօտ: Բայց, ո՞վ է տըւել դարիբրին սիրտանը.

Ա՛խ, իմ համբէն քարոտ ա,
Միքտս էրուած, եարոտ ա.
Ղարբբի օրն ըլնի սեւ,—
Ազիզ եարի կարօտ ա:

Ժողովրդական երգը միայն անհատի սէրն ու վիշտը չէ արտայայտում, այլ եւ հանրայիննը: Համատարած է մանաւանդ հայ գեղջուկի վիշտը, սահման չունի նրա տառապանքը: Նրա բովանդակ կեանքն իսկ մարմնացումն է տառապանքի: Գիւղացիի մէջքը կըած է ամէն կարգի հարկահանների ձեռից, գոռ ու բեզեռից: Ամէն կարգի բռնակալները շունչ քաշելու բոպէ չեն տալիս նրան: Առանձին-առան-

ձին եւ բոլորը միասին՝ նրանք իրենց ցանցի մէջ են առել գիւղացուն իր ընտանիքով մէկտեղ: Նրա ունեցած չունեցածը, տունն ու տեղը, եզն ու արտը պարտքի ու հարկի փոխարէն խլուելու վտանգի տակ են ամէն վայրկեան: Գիւղացու վշտին հաւասարապէս մասնակից են նրա կինն ու աղջիկը, ողջ գերդաստանը: Ո՞րչափ շատ են նաեւ այդ կարգի երգերը՝ հայ-ժողովրդական ստեղծագործութեան մէջ: Նման մի գործ է նաեւ, դրական մշակման ձեւի տակ, Յովհաննիսեանի «Գիւղի ժամը» ոտանաւորը («Տա՛ն-դօ, տա՛ն-դօ»):

Գիւղական կեանքի մի պատկերն է Յովհաննիսեանի «Հատիկ» սիրուն ոտանաւորը եւս: Դա գիւղացու աշխատանքի երգն է, արտայայտութիւնը հողի պաշտամունքի՝ խառնըւած կրօնականին հետ, որ անհարազատ չէ գիւղի աշխարհին: Դեռ լոյսը հազիւ բացուած՝ գեղջուկը պատրաստուած է արտը երթալու, պատռելու հողի կուրծքը իր սուր խոփով, սեւ հողին պահ տալու համար իր սիրուն հատիկը, մինչեւ որ ամբան արեւի օրերը գան.

Թաղեմ քեզ, հատի՛կ, եւ դարդքս քեզ հետ.
Թէ Աստուած ուզեց, դու կանաչեցիր,
Թող դարդքս մեռնի՛ գետնի տակ անհետ,
Դու ինձ միտիքար կրկին տուն դարձիր:

Ի՛նչպէս հարազատօրէն պատկերացուած ենք տեսնում մենք գեղջուկի ողջ աշխարհը, նրա բովանդակ կեանքը եւ հողին, հողի սրբազան պաշտամունքը, որ կրօնականին հաւասար է եւ անբաժան նրանից: Աւելին դեռ. անգամ եթէ անդօր գտնուին երկիւնքն ու Տիրամայրը՝ առատ անձրեւ, բեղուն կեանք ու հասակ պարգեւելու հատիկին, հողի մշակը պատրաստ է՝ գերմարդկայինն անելու, որպէսզի ծլի, ծաղկի ու հասակ նետէ իր հատիկը.

... Ծո՛վ կը դարձնեմ
Եւ տա՛մ քրտինգը փակտիս արեւտ,
Որ քեզ, իմ հատիկ, ծարաւ չքողնե՛մ:
Մի սրբազան օրհներգութիւն, որ ամէն օր հայ գեղջուկը երկիւղածօրէն արտասանում է հողի պաշտամունքի ժամերին:

7.— Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ՝ ՄՇԱԿՈՂ
ԱԶԳԱՅԻՆ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ
ԱՌԱՍՊԵՂՆԵՐԻ

Յովհաննէս Յովհաննիսեան մշակել է նաեւ մի քանի ազգային-պատմական աւանդութիւն-